

891.99
9-83



ԱԿԱՆԱԿ ԸՆԹԵՐՑՈՂԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

ՓՈՐՉԱՆՔ

891.99
9-83

Պատմակ Հրանուրական
թերթիւն

16 NOV 2011

891.99

9-83

այ

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

100.9
400.3
10+2
10+2

ՓՈՐՁԱՆՔ

576

ՀԱԽՑ
ԳԵՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ Շ 1 9 3 6



30165

Պատ. Խմբագիր՝ Սիրառ
Տեխ. խմբ. Յանձնութեան
Սրբազնի Հ. Դոլուխանյան

Քլավիսի լիազոր Ա. հ. 501, Պատվեր 545
Հրատարակ. 3692, Տիրաժ 3000
Գետիքատի տպարան,
Երեվան, Խ. Դնունի, 4

Հանձնված է արտ. 7 ապրիլի 1936 թ.
Ստորագրված է տպելու 15 մայիսի, 1936 թ.

ԳԻՆԸ 45 ԿՈՄ.

СТЕПАН ЗОРЯН
РАССКАЗЫ

Ին ՀՀ Արմենիա, Երևան, 1936 թ.

ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

Ստ. Զորյանը ծնվել է 1890 թ. Ղարաքիլիսայում, միջակ գյուղացու ընտանիքում։ Ավարտել է պետական ուսուական դպրոցը։

Զորյանը գրելն սկսել է 1909 թվականից, նրա առաջին գիրքը «Ճիռուր մարդիկ» վերնադրով, լույս է տեսել 1918 թվին, թիֆլիսում, ուր նկարագրված են մանր—բուրժուական դաստիարակին պատկանող մարդկանց կենցաղն ու բարքերը։

Ստեփան Զորյանի առաջ գրական լայն ասպարեզ բացվեց Հայաստանի խորհրդայնացումից հետո։ Նա կրեց «Գրադարանի աղջիկը», «Հեղկոմի նախադահը» և մի շարք այլ գործեր, վորոնք աչքի յեն ընկնում իրենց գեղարվեստականությամբ և պատմելու չնորդով։

Ստեփան Զորյանը Հայաստանի խորհրդայնացման 15-ամյակի առթիվ Մոսկվա մեկնած Հայաստանի աշխատավորության պատգամավորության անդամ եր։ Նա պարզեատրվեց Համամիութենական կենտրոնակոմի կողմից Աշխատանքի Կարմիր գրոշի շքանշանով։

Զորյանի գլխավոր գործերն են, բացի հիշածներից, նաև «Պատերազմ», «Կրակ» պատմվածքների ժո-

զովածուները, «Սպիտակ քաղաք» վիպակը, «Մի կյանքի պատմությունը»: Ստ. Զորյանը լրադպում ե նաև թարգմանություններով, նա թարգմանել ե Լե Տուստոյի «Պատերազմ և խաղաղություն» հոչակավոր վեպը և բազմաթիվ այլ գործեր:

ՓՈՐՉԱՆՔ

Գյուղաքաղաքի հիվանդանոցի նախամենյակը լի յե ամեն հասակի և ամեն կարգի այցելուներով— կին մարդ, աղջիկ, յերեխա... Շատերը, տեղ չինելու պատճառով, կանգնած են. վոմանք անհամբեր հերթի յեն սպասում բժշկի ընդունարանի դռան առջեւ:

Ոդը հագեցած ե քրտինքի, տրեխի և յոդոֆորմի հոտով:

Յերկու հասակավոր մարդ, մյուս հիվանդներից առանձնացած, խոսում են անկյունում՝ կարմիր նստարանին նստած: Նըրանցից մեկի (վոր ունի սև մազերով հաստ գեմք, խիտ հունքեր և չինացու քիթ) աջ ձեռք կապած է կրծքին: Իսկ մյուսի (վոր ունի ալեխառն փոքրիկ միրուք, հարաշարժ աչքեր և մեջքին արծաթե բսրակ դոտի) գլուխը կապած ե սպիտակ փաթաթանով:

— Յես զարմանում եմ, Պետրոս աղջա, — ասում ե չինացու քիթով, ձեռքը կապած մարդը իր հասակավոր հարեանին.— յերկու որ

առաջ տեսա քեզ վողջ-առողջ, այսոր գլուխոց
 փաթաթած: Ի՞նչ ե պատահել...

— Ել մի հարցնի Ավետիս, — ասում ե
 Պետրոս աղան դլիսի փաթաթանը շոշափելով:

— Կոփիկ ե պատահել, ի՞նչ...

— Ի՞նչ կոփիկ, ի՞նչ բան:

— Հապա՞:

— Մի փուչ բան:

— Վո՞նց թե. վեր ես ընկե՞լ...

— Ի՞նչ վեր ընկնել, ախաղեր. իմ պարոն
 ծառան ե խփել. պարզերես կենա...

— Ծառա՞ն. են Մինա՞սը թե՞ Դավիթը:

— Դավիթ ե, ինչ անսառուն ե, — ասում ե
 Պետրոս աղան նեղացած և նորից շոշափում
 գլխի փաթաթանը:

— Են վոր այդին պահու՞մ ե: Ի՞նչու խը-
 փեց ախր...

— Յերեկ իրիկուն գնացի այգի, փետը
 վեր կալավ ու տուր թե կտաս դլիս մեջ-
 տեղը:

— Վա՛հ, — զարմանում ե Ավետիսը, —
 առանց դես ու դենի՞... չեմ հասկանում...

— Իհարկե, չես հասկանա: Յեթե բանը
 դլիսից չսսես, թարս դուրս կցա, — ասում ե
 Պետրոս աղան աչքի պոչով նայելով հեռու
 ևստած հիվանդներին: Դու գիտես, վոր եղ
 Դավիթ ե, ինչ փուչ կենդանի յե, մեր այգին

պահում ե, ու դժու համար ամսական հինգ
 մանեթ եմ տալի, հացն ել ինձանից. իսկ ամ-
 սական, ամենաքիչը նա կուտի տասնուհինգ
 մանեթ, դեռ հացն ել առանց պանիր չի ու-
 տում: Հինգ մանեթն ել եղ սասանհինգ մանե-
 թի վրա՝ քսան մանեթ: իսկ քսան մանեթը
 քիչ փող չի. դրանով կարելի յե մի կով առ-
 նել: Հլա տրեխներ ել եր ուզում, չտվի...

Հա՛, ախաղերս վոր դու յես, եղ լիրը լրբի վոր-
 դին իրը թե այդի յե պահում: Ամեն որ գը-
 նում եմ տեսնում՝ ծառերի խնձորները, տան-
 ձերը պակաս: Ասում եմ.

— Ա՛յ տղա, Դավիթ, ես ծառերի խնձոր-
 ներն ո՞ւր են:

— Յես ինչ գիտեմ, աղա:

— Վո՞նց թե, — ասում եմ, — բա վոր դու
 չկիտես, ո՞վ գիտի:

Ճեն չի հանում:

Դեռ եղ վոչինչ, վոր մեծ ծառերի խնձոր-
 ներն եյին պակասում. ավելի վատ յեղա,
 յերբ մի որ ել տեմ՝ Ոուսեթի մի թեթև ծառ
 կա, նրա խնձորներն ել պակասեցին: Եղ ծառը
 առել եմ Վարդանի տղից: Մի որ զա յեկավ,
 թե՝ «Պետրոս տղա, մի խորոժ խոտ տուր,
 խոտ չունեմ: Ասի՝ «տար, համա քու այգու
 պատրուսներից մեկը կտաս»: Մարդը խոս-
 տացավ ու տվեց: Ես տարի եղ ծառը բո՞լ
 բոնել եր: Ինքը կարճ, թեթև բան ե, բայց

լավ բռնել եր: Կարկուտը շատ մասը թափեց,
բայց մի քիչ ելի մնաց. Եղ քիչը համբարեցի,
դուրս յեկավ հիսուն-հիսուներկու հատ: Ես
քսնի որը վոր գնացի այդի, ասենք ամեն որ
եմ գնում, համա ես վերջին անզամը վոր գը-
նացի, տեսա եղ ծառի խնձորը պակաս. համ-
բարեցի՝ դուրս յեկավ 48 հատ: Կանչեցի եղ
անիծած Դավթին:

— Արի եստեղ, — ասում եմ:

Վաղեվազ յեկավ ու դիք դադանակի պես
առաջիս տնկվեց:

— Ի՞նչ ե, աղա:

— Աղեն աչքդ հանի: Այ տղա, ասում եմ,
ես ծառի խնձորներն ո՞ւր են:

— Վրեն ե, ուր են աղա:

— Վոնց թե վրեն են, — ասում եմ, — ես-
տեղ հիսուն, հիսուներկու խնձոր կար, հիմի
48 հատ ե, վո՞ր ջհանդամն են գնացել:

— Յես ինչ գիտեմ, աղա:

Ասում ե ու ծառին ե մտիկ անում. մթամ
թե նոր ե տեսնում:

— Բա վոր դու չգիտես, ել ո՞վ գիտի, ա-
սում եմ, — ել ի՞նչ այդի պահող ես, վոր չգի-
տես:

— Զգիտեմ, — ասում ե, — աղա:

Ասում ե ու ելի՛ ծառին ե մտիկ անում,
վոր աչքերս չտեսնի:

— Ամոթ ե, — ասում եմ, — այ տղա, հր-

գուդ մեղք մի անի. թե ուտում ես, ասա՞ ու-
տում եմ. հո յես բան չեմ ասում դրա համար:

— Չե, — ասում ե, — աղա, ուտում չեմ:

— Վոր ուտում չես, — ասում եմ, — բա ո՞ւր
են զնում: Կա՛մ գողանում են, կա՛մ ուտում
ես. ուրիշ ել ի՞նչ կա, հո յերկինք չեն թուչում:

— Չե, — ասում ե, — աղա, վո՞չ ուտում
եմ, վո՞չ գողանում են:

— Եղ վո՞նց կլինի, — ասում եմ. — յեր-
կուսից մեկը՝ կա՛մ ուտում ես, կա՛մ գողա-
նում են՝ դու չես տեսնում:

Չե վոր չե՞:

— Վոչ ուտում եմ, վոչ ել գողանում են:

— Թող եղպես լինի, — ասի մտքումս, ու
մտածում եմ, գուցե չի ուտում, բայց ծախում
ե. կամ, շատ կարելի յե, գողանում են, ինքը
քնում ե՝ չի տեսնում... Վերջապես, ասում եմ,
պետք ե իմանամ՝ այդիս գող ե մտնո՞մ, թե
չե...

Եսպես մտածելով հասա տուն ու յեղածը
պատմեցի սանամորդ: Նա ել ասավ, վոր ծա-
ռան ուտիլ չի, բայց շատ կարելի յե գողա-
նում են, ինքը քնած ե լինում: Եղ ել վոր նա
ասավ, մտածեցի՝ յավ մութը մթնելուց հե-
տո՝ թագուն մտնեմ այդի, խնձոր քաղեմ,
տեսնեմ եղ անիծածը ինձ նկատում ե, թե չե.
յեթե նկատի են ե՝ լավ ե մտիկ տալի, թե
չե հո՝ այդիս անտեր ե, գողերը թալանում են:

Մտածեցի ու արի:

Հիմի, քավոր Ավետիս, դու կասես թե յես
մի քանի խնձորի համար դարդ եմ անում:
Սկի յել չե: Իմ դարդը խնձորները չեյին. թը
քած խնձորների վրա: Յես ուզում եյի խմա-
նամ այգիս գող ե մտնում, թե վոչ:

Հենց եղպես, յերբ մութը լավ մթնեց, մի
փետ վեր կալա, դուրս յեկա տնից ու ճամբա
ընկա դեպի այգի:

Մութ, շատ մութ դիշեր եր. ենպես մութ,
վոր աչք աչքի չի տեսնում:

Յերբ այգուն մոտեցա՝ սիրտս տրապաց.
մի տեսակ վատ բան զգացի: Լավ կլիներ հենց
եղ ժամանակ ել յետ դառնայի, ել ես բանը
չեր պատահի. բայց կարծես սատանան բոթեց
թե՝ գնա՛, գնա՛, գնա՛...

Յես ել մտածեցի— քանի վոր յեկել եմ,
մտնեմ մի փորձեմ եղ անիծածին. տեսնեմ նը-
կատո՞ւմ ե թե չե. յեթե չնկատի, վայն յեկել
ե իրեն տարել, պոչը կկտրեմ. թող ուր ու-
զում ե գնա:

Եսպես մտածելով՝ մոտեցա այդու պա-
տին: Մոտեցա ու լոք տվի վրովը, ու հենց լոք
տվի թե չե, յերկու քար, — վատ եյին դըր-
ված, ինչ եր— իրար հետ ընկան պատից...
Յես մտա այգի ու կանգնած ականջ դրի: Ա-
սում եմ՝ տեսնեմ մարդու ձեն-ձուն, վոտի ձեն
լովո՞ւմ ե թե չե:

Հենց մտել ու մտածում եյի, մեկ ել տես-
նեմ վոտի ձեն լսվեց: Մինը դեպի ինձ եր դա-
լիս: Ասի ով գիտի հենց գող ե: Բայց չե: Յե-
կավ մթի մեջ մի քիչ հեռու կանդնեց ու ձեն
ավեց.

— Ո՞վ ե:

Ասողն եղ լիրը լրբի վորդին եր. ձենից են
ըռպելին ճանաչեցի, բայց ձեն չհանեցի. ասում
եմ ով գիտե հենց ենպես հավարի յե գոռում,
առանց բան տեսնելու:

— Ո՞վ ես,— ձեն տվեց նորից:

Յես ելի ձեն չեմ հանում:

Նա վնթինթաց, հայհոյեց հեր ու մեր
քաշեց ու նորից.

— Ո՞վ ես,— ասում ե, — դուրս արի:

Յես թարսվել, կողքի յեմ ընկել ու ձեն
չեմ հանում: Ասում եմ՝ իրանից դուրս ե գո-
ռում. քարերի ձենը լսել ե՝ դրա համար:

— Դուրս ես գալի, թե չե,— մին ել գո-
ռաց նա:

Ու հենց եղ գոռալը տեսա... Մեկ ել...
Փոռալով մի հաստ փետ յեկալ ու տրաքեց
գլխիս:

— Վա՛յ, անիծվես գու, — ասի և գլուխս
բոնեցի:

Գյաղեն ձենիցս ճանաչեց ու մնաց ոտ-
ուած. ել ձեն չհանեց: Քիչ հետո տեսնեմ գըլ-
խիցս արյուն ե գալի:

— Վա՛յ, — ասի, — յես քու... ես ինչ
փորձանք բերիր դլիսիս:

Գյաղի լեզուն կապ ե ընկել. բան չի խո-
սում: Վերջը կմկմաց:

— Աղա, — ասում ե, — յես ինչ գիտեյի
դու յես...

— Աղեն աչքդ հանի, — ասում եմ, — միրը
լրբի վորդի... Շատ ել քեզ ասել են այդուն
մտիկ անես, պետք ե, ուրեմն, մետը քաշես
մարդ սպանե՞ս...

— Ի՞նչ ես ասում, — զարմանում ե Ավե-
տիսը՝ կապած ձեռքով իր չինական քիթը
տրոբելով:

— Հապա, — հառաջում ե Պետրոս աղան
դլիսի փաթաթանը ուղղելով, — եսենց փոր-
ձանք բերեց իմ գլխին են միրը լրբի վորդին...

— Պետրոս Միրզոյան, — կարդում ե հի-
վանդների ցուցակը սպիտակ շոր հազած յե-
րիտասարդ Փելդշերը և նայում ե Պետրոս ա-
ղայի կողմը: — Հերթը ձերն ե:

Պետրոս աղեն գլխարկը վերցնելով՝ դը-
նում ե կոնատակը և մտնում բժշկի մոտ...

Մեր քեռի Սիմոնը մի շատ չքայլոր մարդ
էր, այնքան չքավոր, վոր շատ որ հաց չեր
ունենում տանը և կինն ստիպված դարի յեր
խաշում յերեխաներին կերակրելու, իսկ աղ-
ջիկներն իրենց գլուխը պահելու համար գնում
եյին հարեանների մարդերը քաղհանելու կամ
ունեորների բարձերի համար փետուր եյին
քաշում ձմեռները:

Եես այս բոլորը լավ հիշում եմ, վորով-
հետեւ այդ ժամանակները տասը տարեկան ե-
յի և շուտ-շուտ գնում եյի նրանց տուն: Զնա-
յած իր այս չքավորության, քեռի Սիմոնը,
սակայն, տարվա մեծ մասը անդործ եր մնում
և առհասարակ այն կարծիքի յեր, վոր ասա-
ված իր ստեղծածին «չի կորցնի»... Լինելով
տատիս յեղբայրը՝ նա զբեթե ամեն որ գալիս
եր մեր տուն զրուցելու, մանավանդ ձմրան
յերկար յերեկոներին: Դա մի բարձրահասակ
մարդ եր՝ յերկար ձեռներով ու յերկարուն
վուներով և կոկորդից դուրս ցցված մի վու-
կորով, վոր բկում մնացած համի գլուխ լիներ

Էլարծես: Իսկ յերեսի ու գլխի ալեխառն մազերն ինձ միշտ հիշեցնում եյին նապաստակի մորթի. այնպէ՞ս դժվար եր ջոկել նրանց սևն ու սպիտակն իրարից: Յեվ ընդհանրապես՝ մեր քեռի Սիմոնը մի իսկական գյուղացի յեր նահապետականորեն ավանդապահ ու սրտարաց: Կարծես հիմա յել տեսնում եմ, թե ինչպես սև մորթենին գլխին, սև չիբուխն ատամների արանքին, բանում ե մեր տան դուռը և չեմքում կանգնում:

— Բարի որ ձեզ, — ասում ե հանդիսավոր ձայնով և, մի առժամանակ կանգ առնելով, Հայացքը պտտում ե տան մեջ:

— Աստծու բարին, քեռի Սիմոն:

— Ի՞նչ ունեք ուտելու:

Մերոնք տալիս են կերակրի անունը.

Թանով ապուր կամ բընձով շորվա:

— Դե, մի աման բերեք տենամ:

— Համեցի՛ր, քեռի Սիմոն:

Յեվ քեռի Սիմոնն, ինչպես իր տանը, նստում ե յեղած կերակուրն ուտելու, վրան չկաթեցնելու համար գդալի տակ հացի մի կտոր բունելով: Ու կշտանալուց հետո սկսում ե պատմել, թե ի՞նչ յերազ ե տեսել դիշերը:

Այսպես եր քեռի Սիմոնը. նա գրեթե ամեն գիշեր յերազ եր տեսնում և առավոտը զալիս մեր տանը պատմում: Թեև շատ տարիներ են անցել այդ որերից, բայց յերեք չեմ մոռա-

նում քեռի Սիմոնի յերազները... Դրանք լինում եյին առավելապես այն մասին, թե ի՞նչպես աստված, սրբերը ներկայանում են իրենքեռի Սիմոնին և ասում, թե անտառի այսինչ տեղում թագնված գանձ կա— մի պղինձ վոսկի՝ խուփն յերեսին—ու խորհուրդ են տալիս հանել. «ՅԵ՛Լ, Սիմոն գնա՛ հանիր—ասում ե աստված,—գնա՛ բավական ե խեղճ ապրես»:

— Եսպես ե հրամայում տերը,— վերջացնում եր ամեն անգամ քեռի Սիմոնն աստվածավախ ձայնով, յերեսը խաչակնքելով:

Տասու, վոր մի բարի, միաժամանակ և շատ համառ կին եր, յերբեք չեր հավատում յեղբոր յերազներին, կշտամբելով, վոր նա յերեխա ժամանակն ել փողոցներում պտտում եր փող գտնելու հույսով, բայց բնավ չեր գտնում: Ու բոլորից վերջը տասու հիշեցնում եր նրան յոթ ուռելի պարտքը, վոր տալու յերիրեն: Իսկ ինչ վերաբերում ե մորս, նա, ամենայն բարեպաշտությամբ ունկնդրելով քեռի Սիմոնին, յերկյուղով խաչ եր քաշում յերեսը ու հետաքրքրվում թե ի՞նչ տեսակ մարդ ե աստված, ի՞նչպես են յերեսը սրբերը և ի՞նչ կա առհասարակ նրանց վրան ու հագին:

— Սրբե՛րը,— խաչակնքում եր յերեսը քեռի Սիմոնը,— մեռնեմ նրանց զորքին. յերեսը են ալ-կարմիր հագած, շատ ժամանակ ձի հստած... Իսկ աստված— յերեսս վոտի



տակը՝ դալիս ե ապիտակ չորերով։ Ծե՛ր, աւ-
մոր մարդ ե, — ասում եր նա յերկյուղալից
խանդաղատանքով։ — Բամբակի պես ապիտակ
մազեր ունի։ Ենքա՞ն բարի յե, ենքան քա՞ղցր
ձեն ունի, վոր յերբ խոսում ե՝ ուզում ես
մի շտ լսել։ Ասում ե. «Վորդի՛ս, գնա՛ ու հա-
նիր։ Հերիք ե խեղճ ապրես»...

— Հեջ բան ել չես հանի, — նկատում ել
տատս ձեռն անհուսալի թափ տալով և յերեսը
յեղբորից ըրջելով։

— Կհանե՛մ, Հերիքնաղ, կհանե՛մ. կհա-
նեմ ու քու ոխտը մանեթը կտամ. աղջկերանցս
ել մարդու կտամ, տուն ել կշինեմ... — Հայ-
տարարում եր քեռի Սիմոնը հանդիսավորա-
պես և մի առ մի որինակներ թվում, թե վո՛ր
տեղ ի՞նչ թագնված գանձեր են հանվել։ — Լո-
րուտում, ասում են, մինը մի կճուճ վոսկի յե
գտել արտը վարեկիս ու հիմի հայտնի հարուտս-
ե։ Դսեղում մի ուանչպար մարդ, ասում են,
արծաթե ամաններ ե գտել հողում, մի ուրիշը՝
դութանի սարք։ Իսկ յես ինչո՞ւ չեմ կարող
գտնել. ուրեմն սո՞ւտ ե ասում աստված։ Կհա-
նե՛մ, Հերիքնաղ, կհանե՛մ։ Կնիկս ել չի հա-
վատում քեզ պես, բայց կհանեմ, կտեսնե՛ս, —
կրկնում եր քեռի Սիմոնը, — միայն թե մի հա-
վատարիմ ողնական ունենամ...

Ու այս ասելով՝ նայում եր հորս. իսկապես
նո ուզում եր, վոր այդ ողնականը լինի հայրու-

վորին և շարունակ առաջարկում եր գնալ գան-
ձը միասին հանելու։ Մենակ չեր ուզում, վո-
րովհետեւ, իր ասելով, մենակ դժվար կլի-
ներ. ուրիշին ել չեր կամենում ընկերացնել,
վորովհետեւ՝ ո՞ւմ կարելի յե վստահել հիմա...
Հայրս թեե, իբրև հին գյուղացի, մասամբ
հավատում եր քեռի Սիմոնի յերազներին,
բայց, չգիտեմ ինչո՞ւ, միշտ խուսափում ե
նրա առաջարկից, ասելով թե՝ դժվար ե գտնել,
տեղը հաստատ հայտնի չե, և այսպես ուրիշ
բաներ։ Յեվ քեռի Սիմոնը նրա մերժումներից
դժգոհ՝ հեռանում եր ամեն անդամ միւսնույն
խոսքերը կրկնելով.

— Դե, դու գիտես։ Ասում եմ մի բանի
տեր ել դու դառնաս... .

Բայց հորս համառությունը վերջապես,
կոտրվեց մի որ, յերբ քեռի Սիմոնն անչափ
ուրախ, ինդությունից ասես խելազար, նետ-
վեց մեր տուն և հայտարարեց, թե գանձի իս-
կական տեղը գտել ե արդեն։ Դա անտառի մեջ
ե, ավերակ յեկեղեցու մոտ, մի մեծ հաճարե-
նու տակ։

— Գիտե՞ք, — սկսեց նա խանդաղատալից
յեղանակով, յերկար ձեռները գլխից վեր բըռ-
նած. — շանց տվեց տերն ինքը, տերն ինքը իրա
ձեռով։ Յեկավ ու ասում եր բարկացած. «Ին-
չի՞ չես զնում ասածս հանում... Դու ինձ չես
ուզում լսե՞լ... Յես քու աչքերը կհանեմ», —

ասում ե: Բայց իրա աչքերը բարի՛, բարի յեն: «ՏԵ՛Ր, ասում եմ, տեղը չգիտեմ»: «Չգիտես, ասում ե, արի՝ ցույց տամ...»: Ու ձեռս բըռնած տարավ կանդնեցրեց մի մեծ հաճարի ծառի տակ ու ասում ե. «Հենց սրա տակ ե վոր կա»... Ու ինքը գնա՞ց: Ել չտեսա ուր գնաց...

Յեվ մի առժամանակ քեռի Սիմոնը մնաց գոհության լուսաշող ժպիտը գեմքին, ապա դարձավ հորս.

— Հը՛, հիմի ի՞նչ կասես, քվոր տղա...

Հայրս լուռ եր:

— Յես, ասենք, մենակ ել կերթամ, բայց լավ կլի, վոր դու ել ըլես, շարունակեց քեռի Սիմոնը, — յերեխի տեր ես, ասում եմ, թող մի բան ել քեզ ընկնի: Դրա համար, հույս ունեմ տերն ինձ չի պատժի. շատ-շատ՝ «իմ քրոջ տղեն ե», կասեմ:

Հայրս ծիծաղեց: Դու նշան եր լավ տրամադրության: Յեվ, իսկապես, չգիտեմ, քեռի Սիմոնի հանդիսավոր պատմության ազգեցության տա՞կ, թե՞ մորս հորդորների հետևանքով, նա համաձայնություն տվեց քեռի Սիմոնին ընկերանալու: Վորոշվեց՝ հետեւյալ որն իսկ մի գույգ աղավնի գոհաբերել մեծ հաճարենու տակ և յերեկոյան, յերբ մութը լավ կմթնի, գնալ հանելու:

Ի՞նչ յերջանիկ յերեկո յեր այդ յերեկոն... ի՞նչ հույսեր, ի՞նչ յերազներ եյին սավառնում մեր փոքրիկ խրճիթում: Ինչե՛ր չզիտի անենք, յեթե մեր ձեռն ընկնի այդ մի կաթսա վոսկին. ել նոր տո՛ւն, ել նոր շորե՛ր... ցույց կտանք այն ժամանակ բոլոր հարուստներին... Քեռի Սիմոնն ուրախությունից շարունակ կատակում եր տատիս հետ. «Ճակատիդ վոսկի պըտի շարեմ, Զերիքնազ, վոսկի՛». իսկ տատոս կրկնում եր միալար. «Քու վոսկին ինձ պետքը չի, իմ ոխտը մանեթը տուր»:

Վերջապես, յերբ մութը լավ մթնեց և վոտքը խաղաղվեց գյուղում, քեռի Սիմոնն ու Հայրս՝ բահ ու քլունգ վերցրած՝ դուրս յեկան տնից: Քեռի Սիմոնը վոսկու համար տանում եր յուղի մի տիկ, կաթսան ծանր լինելու դեպքում կեսը նրա մեջ լցնելու նպատակով:

Մենք արթուն մնացինք սպասելու:

Յերկա՛ր, շատ յերկար տևեց այդ սպասումը: Յեվ վորքան յերկարում եր ժամանակը, այնքան ամելի հույսերով լցվում եր մեր սիրուը:

Ուրեմն մի բան գտել են, վոր ուշանում են...

Յերեկի շատ խորն ե թաղված...

Անպայման մի բան դտել են...

Չգիտեմ, քանիյերորդ անդամն եյինք կրկնում այս մտքերը, յերբ դուռը թակեցին հանկարծ: Հայրս եր... բայց դատարկ ձեռաներով: Ինչո՞ւ, մի՞թե վոչինչ չկար, քեռին ո՞ւր ե հապա—հարցերի տարափ եր, վոր տեղում եյին հորս դլսին: Իսկ տատս, հորս տեսնելով այդպես դատարկաձեռն, դլուիը շարժեց քմծիծաղով:

— Եղակս ել գիտեյի, վոր վոչինչ չի ըլլի, — Հայտարարեց նա:

Բայց տատս զուր եր շտապում: Հայրս յեկել եր լինդի: Նրա պատմածից յերեաց, վոր քանդել հասել եյին մի սալաքարի, վորը սակայն չեն կարողանում շրջել, դրա համար յեկել եր լինդը տանելու, վոր քարը շրջեն, և ինձ վերցնելու, վոր պահակի դեր կատարեմ: Ո՞վ դիտի, կարող ե պատահել մարդիկ դան և իրենք զբաղված՝ չնկատեն: Լավ կլինի, վոր յես ել գնամ:

— Վոր սալաքար կա, ուրեմն պղինձը դրա տակ կլինի, — ասավ մայրս:

Հայրս ել այդպես եր կարծում, և ամբողջ ճանապարհին շշուկով ասում եր ինձ, թե այդ սալի տակ անպատճառ մի բան պիտի լինի...

Ժամանակը գիշերվա կիսից անց եր. աշնանային խոնավ մութը սարսափ եր բերում իմ մանուկ հոգուն. ճանապարհի շուրջը յերեա-

ցող թփերը թվում եյին ինձ դարան մտած գաղաններ, ծառերը՝ սպառազեն ավաղակներ, իսկ մասրենիները՝ պար բռնած սատանաներ: Զնայած այս բոլորին, մի բան այնուամենայնիվ ինձ դյութում, քաշում եր դեպի մութ, խշացող անտառը, ուր, թվում եր, քեռի Սիմոնն արդեն հանած պիտի լինի վոսկին...

Բայց մենք նրան գտանք տակավին փոսի մեջ. նա սաստիկ հեռում և քրտինքը սրբում եր շուտ-շուտ: Մեզ տեսնելով՝ գլուխը բարձրացրեց փոսից:

— Յեկե՛ք, յեկե՛ք. սալը ժաժեմ գցել, — գրեթե բացականչեց նա հրճվանքով:

Փոսը բավական խոր եր. քեռի Սիմոնի դոտկատեղից ել բարձր: Անտառային փիրուն հողը կիտվել եր նրա յերկու կողմը և սեին եր տալիս դորշ շրջապատի մեջ: Հայրս իսկույն՝ լինդը ձեռին մտավ փոսը, և այնուհետեւ սկըսվեց մի ծանր աշխատանք՝ տնքոցով ու մկանների լարումով: Աստծուն ոգնության կանչելով՝ ուսերնին դնում եյին նրանք լինդի տակ և աշխատում սալը շրջել, յերբեմն լողությունները լարած՝ ականջ եյին դնում, թե հեռվից, մոտից չի՞ լսվում արդյոք մի ձայն, վոտնաձայն: Վոչինչ չկար: Յես ամենայն աչալրջությամբ կատարում եյի իմ պաշտոնը, և վոչինչ չեյի նկատում: Տերեներն եյին միայն թափվում աշնան անտառում, վոր ահի մի դողով

բոնված ասես, ինչ-վոր շշնջում եր շարունակ
խո՛ւլ ու խո՛ր մի ձայնով, վոր ավելի նման
եր հառաջանքի: Թվում եր յերբեմն, թե՝ ան-
թիվ մարդիկ՝ աչքերնին չորս արած՝ գաղտա-
դողի նայում են մեզ ծառերի յետևից, վոր
վոսկին դուրս դալուն պես հարձակվեն հափրչ-
տակելու:

Յերկա՞ր, շատ յերկար տևեց աշխատանքը
փոսում: Սալը չեր շրջվում: Նա շարժվում եր,
բայց չեր շրջվում: Բազմաթիվ փորձերից հե-
տո, վերջապես, հաջողվեց սալը շուռ տալ:
Բայց այն, ինչ վոր սպասում եյին... չկար,
ավա՞գ: Վոսկու փոխարեն դուրս յեկան ինչ
վոր վոսկորներ... Հայրս վրդովված դուրս յե-
կալ փոսից, իսկ քեռի Սիմոնը մի առժամա-
նակ լուռ, արձանացած մնաց այնտեղ:

— Ե՛, ինչպես յերեսում ե, սիսալվել
ենք, — ասավ նա քիչ հետո. — Հաճարի են կող-
քը քանդելու տեղակ՝ ես կողքն ենք քանդել.
Հիմի յեմ հիշում, վոր են կողքը պտի քանդե-
յինք...

Հայրս ավելի վրդովված վերցրեց բահն ու
մնդը և կանչեց ինձ:

— Ո՞ւր, — զարմացած հարցրեց քեռի Սի-
մոնը:

— Տո՛ւն, — յեղավ հորս պատասխանը:

— Կայ հլա՛, ա՛յ մարդ, կա՛ց մի են կող-
քը քանդենք...

— Դու քանդի քեզ ըլի, — ասավ հայրս
վերջին անգամ, և մենք ճանուպարհ ընկանք:
Մեր յետևից քեռի Սիմոնը միքանի անգամ
ցածր ձայնով կանչեց, խնդրեց դառնալ, բայց
հայրս մնաց անդրդվելի. նա յետ անգամ չնա-
յեց:

Տուն հասանք յերկրորդ աքլորականչին՝
սաստիկ հոդնած ու հիսաթափված...

Հետևյալ որն առավոտյան հենց նոր նստել
ելինք թեյի, քեռի Սիմոնն յեկավ՝ դարձյալ
ուրախ տրամադրության մեջ:

— Զեյի ասո՞ւմ, — սկսեց նա շեմքից, —
եղակես ե կա. մենք սիսալվել ենք, քվոր տղա:
Դիշերն աչքս կպցրի թե չե՝ նորից յերեաց նա
(քեռի Սիմոնը խաչակնքեց յերեսը): Ասում ե՝
«Ինչո՞ւ ծառի աջ կողքը քանդեցիր, գնա՛, ա-
սում ե, ձախ կողքը քանդիր»:

— Բա ինչո՞ւ չես գնում, — ասավ հայրս:

— Եի՞. բա դու դալիս չե՞ս:

— Զե՞:

— Եի՞ վոր:

— Ենպես...

Յերկու որից հետո սակայն նա դարձյալ
յեկավ և հայտնեց, թե ելի շշկվել ե. պետք եր
քանդել վոչ թե մեծ հաճարենու տակ, այլ նրա

Կողքի հաճարենու, ուր հենց նշաններ ել նկատվում են. Հողը նստած ե մի քիչ: Այնուեղ անպատճառ մի բան կա: Յեվ, վերջապես, չի կարող պատահել, վոր չլինի. չե՞ վոր առաջ, մեզանից շատ առաջ, այդտեղ գյուղ ե յեղել, յեկեղեցի կա. և շատ ընական ե, վոր մարդիկի թշնամու յերեսից փախչելու ժամանակ իրենց գանձերը թագցրած լինեն արդտեղ: Իդուք չե, վերջապես, վոր յերազում միշտ ցույց են տալիս իրեն:

Հայրս սովորաբար լոռում եր. տատս, սակայն, առաջվա պես շարունակում եր իր կատկածանքն ու կշտամբանքը: Բայց քեռի Սիմոնն ամեն անդամ ասում եր հալարտ արժանապատվությամբ.

— Կտեսնես հիմի, Հերիքնազ, կզտնեմ, թե չե: Կտեսնեք...

Անցավ մի ամիս, քեռի Սիմոնը բան չեր գտնում և կինը շարունակ գալիս եր տատիս դանդատ, վոր մարդը գիշերները տանը չի մնում ու խնդրում եր նրան յեղբորը բան հասկացնել: Իսկ մինչ այդ ձմեռը յեկավ. ձյունը ծածկեց գյուղ ու անտառ, և գետինը սառավ քարի պես: Յերբեմն այնպես ցրտեր եյին լինում, վոր ծտերը յերամով մտնում եյին գոմերը և գայլերը գիշերները վոռնում եյին գյուղի մոտ: Քեռի Սիմոնն այժմ ման եր գալիս իր հին, մաշված քուրքն ուսերին. յերեկոնե-

րը անց եր կացնում ողաներում կամ գալիս եր մեր տուն զբուցելու: Յեվ ամեն անդամ, յերբ խոսք եր լինում գանձի մասին, նա տիրությամբ նայում եր վառարանին և ասում.

— Սպասեք, սպասեք մի գարունը բացվի... Կտեսնեք են ժամանակի... Մի բան վոր տեղը գիտեմ արդեն...

Յեվ, իսկապես, մարտին, յերբ ձյուները կամաց-կամաց հալ ընկան և գետինը փափկեց, քեռի Սիմոնն ավելի մեծ յեռանդով վերսկսեց իր աշխատանքները: Այժմ նա ասում եր վոգերված. «Ըհը՛, յա եսոր, յա եգուց»... Բայց որերն անցնում եյին որերի յետեկից և վոչինչ չեր լսվում, թե քեռի Սիմոնը մի բան ե գտել. ու մի որ ել հանկարծ լսեցինք, վոր նա հիվանդացել ե— սաստիկ հազում և ու տնքում: Կնոջ ասելով՝ մի գիշեր անտարից յեկել եր ու անկողին մտել: Տատս իսկույն գնաց յեղբորը տես:

Զանցավ սակայն մի յերկու որ, քեռի Սիմոնը վախճանվեց:

Մեռնելուց մի ժամ առաջ նա հայտնել եր կնոջը գանձի տեղը և հանձնարարել՝ գտնել մի հավատարիմ մարդ՝ հողի տակից այդ «պահուստը» հանելու:

— Խոստացիր վոր կկատարես, — ասել եր քեռի Սիմոնը:

Կինը խոստացել եր, և նա հանդիսաւ փակել եր աչքերը:

Այժմ հայտնի չե ինձ՝ կինը կատարել ենրա կամքը թե՞ վոչ, բայց յես այսքանը միայն կարող եմ ասել, վոր քեռի Սիմոնի ընտանիքը մինչեւ այսոր ել ապրում ե առաջվա պես չքավոր, իսկ անտառում՝ ավերակ յեկեղեցու շուրջը կան բազմաթիվ փոսեր՝ պատառուկներով ծածկված ու հին տերեներով լիքը. և ամեն անգամ, յերբ տավարն արածելու ժամանակ անզգույշ մողիները և նույնիսկ զգույշ կովերն ընկնում են նրանց մեջ՝ տավարածներն անլուր հայհոյանքներ են ուղղում. փոսեր կտրողի հասցեյին:

Յեկ այդ բոլորը մեր քեռի Սիմոնի կտրած փոսերն են:

1916

Զ Մ Ր Ա Ն Գ Ի Շ Ե Բ

Լուս, արծաթաշող դիշեր ե. ձյուն և ուղունին: Փայլում ե ձյունը տանիքների. վրա, փայլում ե ցանկապատերին և շողչողում ծառերի ձյուղերին: Ամեն ինչ վողողված ե լուսնի առատ լուսով:

Փոքրիկ քաղաքը քնած ե խաղաղ: Փողոցները դատարկ են. պահակներ անգամ չեն յերեսում: Շները յերբեմն հատընդհատ հաջում են լուսնի վրա և, ուշագրության չարժանանալով, լուսմ զայրացած մոռոցով: Կես դիշերից անց ե, բայց քաղաքացի Հակոբի քունը չի տանում: Թեև սենյակը տաք ե, անկողինը փափուկ, բայց և այնպես քնել չի կարողանում: Այս բանը պատահում ե զրեթե ամեն դիշեր: Ո՛, յերկար են ձմռան դիշերները. մարդ հոգնում ե քնելուց: Յեկ Հակոբը լուսամուտից նայելով լուսնի առատ լուսին, շողչողուն ձյուներին, մտածում ե.՝ ի՞նչ լավ կլինի ձմռան դիշերն ել ամառվա պես կարճ լինի. մարդիկ իզուր ժամանակ չեն կորցնի և կաշխատեն մերան գլուխ բերել. թե չե անխոս պառկելուց

27

Ի՞նչ ոգուտ: Մտածում ե Հակոբը, տնքում ե
Հողացավ ունեցողի նման ու հազում այնպիսի
մի հազով, վորով ուշադրություն են հրավի-
րում կամ ուզում են իմանալ՝ հարևանը քնա՞ծ
ե, թե վոչ: Սենյակում նրա հարևանը կինն ե,
և վորքան ել Հակոբը հազում ե, շարժվում,
կինը կարծես չի լսում. քնա՞ծ ե, թե՞ քնած ե
ձեւանում—դժվար ե իմանալ: Սպասում ե Հա-
կոբը մի փոքր ե ելի հազում: Նույնը: Բայց
նա խոսելու անդիմադրելի ցանկություն ե ըդ-
դում. նրա գլխում խոնդում են բազմաթիվ
մտքեր, կատածներ, յենթադրություններ,
ուզում ե հայտնել, ստուգել: Ու կամաց, քըն-
քանքով հրում ե կնոջը:

— Արո՛ւս, ա՛յ Արուս:

Կինն անմիջապես չի պատասխանում, ճըր-
բում ե, ասես յերազի մեջ, գլուխը թեքում ե
բարձի վրա և տնքում քնից զարթնողի տնքո-
յով:

— Ի՞նչ ե:

— Քնա՞ծ ես,— հարցնում ե մարդը:
— Ի՞նչ կա վոր...

Ու կող ձայնի մեջ լսվում են դժողու-
թյան շեշտեր:

— Վոշինչ,— ասում ե մարդը յերեսը կնո-
ջը դարձնելով:— Ասում եմ՝ տեսնես ես ցրտո-
վը զինվորներն ինչպես են մնում դիրքերում՝

լեռների մեջ, ամայի դաշտում: Մինչև անգամ
գայլեր կարող են յերեալ:
— Հա՛, չե՛ մի, պողեր, — խոսում ե կինն
անտարբեր:

— Այո՛, այո՛, քեզ բան եմ ասում, առար-
կում ե Հակոբը:— Մի՞թե չգիտես, վոր ուազ-
մարեմերում միշտ գայլեր են յերեում: Հիմի
կհարցնես՝ ի՞նչպես: Այ ասեմ: Հեռվից զգում
են մարդկային դիակի հոտ և իջնում սարերից,
անտառներից...

Մի բոպե լոռում ե մտախոհ և ապա շարու-
նակում.

— Եհ, պատերազմը շատ վատ բան ե,
շա՛տ... Մեկմեկ մտածում եմ— յեթե մի որ
հանկարծ թշնամին մոտենա քաղաքին, ի՞նչ
ես կարծում, դերձակ Մինասը վո՞նց պիտի
փախչի. ինքը կաղ, կինը պատճառավոր, հինգ
ել յերեխա. վո՛չ կառք կարող են վարձել, վո՛չ
այլ:

— Զիով կերթան, — ասում ե կինը, — մի
բան վոր տան մեջ չունեն:

— Զի՛: Ե՛, սիրելիս, ձին ավելի թանգ
ե... Մեկ ել, փախչելու ժամանակ ո՛վ իր ձին
ուրիշի կտա: Վոչ-վոք: Զե՛, նրանց համար
շա՛տ, շա՛տ դժվար կլինի: Մանավանդ վոր կի-
նը պատճառավոր ե, չի կարող ձի նստել:

— Թա՞նգ ե, չի՛ լինի, վոտով կերթան, —
ասում ե կինն ելի անտարբեր:

— Հեշտ ե ասել՝ վո՛տով։ Ապա մի փոր-
ձիր ես ձյունին ու ցրտին։ Կարո՞ղ ես ովի։

Կինը բարկանում է թեթև ու ձեռք հանում
վերմակի տակից։

— Ելի՛... ինչո՞ւ մեզ թողած, ուրիշների
մասին ես մտածում։

— Դե, մեզ ինչ կա, — ասում ե մարդը, —
մենք վոտով ել կերթանք։ Իսկ թե դերձակն
ինչպես կանի չդիտեմ։

— Դե լա՛վ, — յերեսը շուռ ե տալիս կի-
նը, — թշնամին չեկավ՝ փախչելլ մնաց։

— Ասում եմ՝ յեթե մի որ գա, — պատաս-
խանում է Հակոբն արդարանալու պես։ — Չե-
զոր մարդ պետք ե մի քիչ հեռուն մտածի։

Կինը նորից թեթև նեղանում ե։

— Լա՛վ. թող քննենք, — ասում ե յերեսն
ավելի շրջելով։

Հակոբը լուսմ ե։ Նայում ե լուսնի շողե-
րին, վոր ընկել են հատակին, պատին և շողջո-
ղեցնում են պահարանի ապակիները։ Դուրսը
քամի յե։ Լուսամուտի առջևի ձյունածածկ
ծառը թեթև յերերվում ե և խաղացկուն լույ-
սեր ու ստվերները փոռամ հատակին։ Լու-
թյուն ե. քնած ե տունը, քնած են հարևաննե-
րը, քնած ե ամբողջ քաղաքը։ Բայց Հակոբի
քունը դարձյալ չի տանում։

Լության մեջ անցնում է բավական ժա-
մանակ. նա մեջքի վրա պառկած՝ մտածում է

ու կենտահազ տալիս։ Ապա՝ յերկար նայում ե
ծառի յերերվող ստվերներին ու նորից կամաց
հրում կնոջը։

— Արո՛ւ։

Կինը տնքում ե հառաջանքով։

— Զարթո՞ւն ես։

Կինը զարթնում ե դժկամ. — Ի՞նչ ե ե...

— Վոչինչ. մի բան եմ ուզում ասել։ Տե-
սե՞լ ես տերտերանց բակում ինչքան ստույց
կա։ Զարմանալի յե, թե ինչո՞ւ չեն մաքրում։
Ենքան յերեխա ունեն, պառավ մայրը, կինը՝
միշտ ման են զալիս բակում, և մեկը չի մտա-
ծում, վոր կարող են ընկնել, վնասվել։ Դե ա-
ծում, վոր կարող են ընկնել, վնասվել։ Դե ա-
ծում, վոր կարող են ընկնել, վնասվել։ Դե ա-
ծում, վոր կարող են ընկնել, վնասվել։ Վն-
րի ու ես թանգ ժամանակի բժշկիր զբանց։ Ան-
միտնե՛ր։ Յես կարծում եմ՝ պետք ե հասկաց-
նել, վոր մաքրեն։ Համ ել, գիտե՞ս ինչ, սա-
ռույցը ծառերին կարող ե վնասել։ Ափսոս են։
Իսկ նրանց բակում ծիրանի լա՛վ ծառեր
կան...»

— Ե՛հ, — ընդհատում ե կինը, — ի՞նչ կու-
զե ըլեն. մեր բակում քիչ սառույց չկա. մաք-
րող ես, մեր սառույցը մաքրի։ Քարը տերտե-
րանց գլխին ել, նրանց ծառերի յել։

— Ախր չե՛, լավ ծառեր են, որո հա-
մար եմ ասում։ Մի՞տղ ե՝ հերու ինչքան եյին
բոնել. քիչ եր մնում ճղակտոր ըլեյին։ Յեթե
ես տարի ել եղքան բոնեն, հասկացնեմ պի-
տի, վոր ճղների տակը տայաղ տան։

— Ե՛, քնիր, — ասում ե կինը տրտնջուտ, — եղքան ծառ սիրող ես՝ ինչո՞ւ մեր բակում մի ծառ չես տնկում... .

Հակոբը լուսմ ե. ուզում ե առարկել կնութը, վոր իերենց բակում ծառ չի կարող աճել, քանի վոր ջրի արխ չունեն, բայց միտքը նոր բան ե ընկնում հանկարծ:

— Բա իմացել ե՞ս, — ասում ե աշխուժով. — Տոնոյի կովը ծնել ե, որապակաս հորթ ե րերել: Ինչպես պիտի պահեն—չդիտեմ: Զարմանալի յե: Պոչն ել կարճ ե, ասում են: Մի թիզ: Յեթե ամառը ճանձերը վրա տան՝ վո՞նց պիտի անի: Հը՞: Բոռերը կիսեղղեն անպատճառ...

Կինը չի լսում այլնս. նա քնած տնքում ե, ասես ծանր բեռի տակ: Լսում ե Հակոբը կնոջ քնածայնը և նայում նորից լուսնի շողերին: «Այո, բոռերն անպատճառ կիսեղղեն, յեթե պոչը չերկարի», մտածում ե նա:

Ժամանակն անցնում ե լուսւթյան մեջ և լուսւթյունը, թվում ե, հոսում ե: Հակոբն իր ականջներում խուլ, շատ խուլ խշոց ե լսում: Ծառի շվաքն այժմ ընկել ե դիմացի պատին, ուր լույսեր ու ստվերներ են խաղում նորից: Յերեխ դուրսը դարձյալ քամի կա: «Այո, անշուշտ, քամի կա, մտածում ե Հակոբը. — իսկ քամին հիմա ծառերին վնաս ե: Տերտերանց ծառերն ել հենց քամու առաջն են».. .

Քամի՞ն: Ինչ վնասներ ասեք վոր չի պատճառի քամին, մտածում ե Հակոբը: Ո՛, յեթե այդ քամին հանկարծ հողմ դառնա՝ ի՞նչեր ասես չի անի: Մանավանդ յեթե հրդեհ լինի քաղաքի վորեւե թաղում: Ի՞նչ հրդեհ: Լուցկու կայծը մենակ բավական ե, վոր քաղաքը կրակի ծովլ դառնա: Դա կարող ե պատահել հենց մի վորեւե ծխնելույզից: Քամին ել հո միշտ հոկառակ ե ծխնելույզներին:

— Աստված վոչ անի, յեթե ես քամու ժամանակ վառվող բուխարիկ լինի, ասում ե Հակոբն ինքնիրեն և մտածում այս անփույթ տանտերերի վրա, վոր ծխնելույզները չեն մաքրում ձմեռնամուտին: Չեն մաքրում և ստանում են պատիժը: Բայց ցավն այս ե, վոր նրանց հետ տուժում են ուրիշներն ել: Ու Հակոբը մտախոհ շարժում ե գլուխը բարձի վրա, ապա զգուշությամբ ձեռը դիպցնում կնոջ կողին:

— Արուս...

Կինը չի լսում:

— Արուս, — կահչում ե Հակոբն ավելի բարձր:

Արուսն այս անգամ զարթնում ե մեծ գըժկամությամբ և թոնթորում ե ինչվոր:

— Արուս, — սկսում ե Հակոբը հոգատար ձայնով, ուշադրություն չդարձնելով կնոջ քրթմնջոցին. — Մի բան եմ հարցնելու. դու

կիմանաս, վորովհետեւ բալկոնում շատ ես լինում...

— Կարճ կտրի, — ասում ե կինը:

— Ասում եմ՝ գուցե տեսած լինես, — շարունակում ե մարդը, — կարծում եմ տեսած լինես, վորովհետեւ բալկոնից յերեսում ե: Կարսապետ աղեն ես տարի իր բուխարիկները մաքրել ե ափել, թե չե:

Կինը դժգոհ շարժումներ ե անում.

— Ի՞, Արուսն ուրիշ բան չունի, աչքը Կարսապետ աղի բուխարիկների վրա պիտի պահի: Գլուխը քարը Կարսապետ աղի յել, նրա բուխարիկների յել:

— Զե՞ն, ախր մի լսի՞ր. գիտես ինչ կա, — Հասկացնում ե Հակոբը կնոջը, — յեթե չի մաքրել, խայտառակ բան կլինի:

— Ի՞նչ կլինի, — Հարցնում ե կինը բարկացած:

— Ի՞նչ, միթե չես հասկանում ի՞նչ կպատահի, յեթե մաքրած չլինեն: Են ել քամու ժամանակ: Բավական ե բուխարիկներից մեկը վառվի, ել հնարավո՞ր ե հանգցնել: Շւ հետո, գիտե՞ն ի՞նչ կլինի: Կվառվի վոչ միայն նրա յերկու հարկանի տունը. կվառվի ամբողջ կահարսախն, կվառվի աղջկա բաժինքը, ու միանգումից կքանդվի յերկու տուն: Ասում են՝ աղջիկը մի տան բաժինք ունի: Հետո, ներքե

կվառվի գինին, կոնյակը... Ու ամբողջ վերի թաղը: Հասկանո՞ւմ ես...

— Եհ, հերի'ք ե, — բարկանում ե կինը, այլես չկարողանալով իրեն պահել, — իւալիսի գարդարարը չես:

— Ասում ես ելի՛, — վշտանում ե Հակոբը քիչ լոելոց հետո, — ի՞նչպես դարդ չանես, յերբ մի անփութության պատճառով՝ քաղաքի ամենալավ տունը և մի ամբողջ թաղ կարող է գոչնչանալ: Ինչպես զարդ չանես, յերբ քավոր Բարսեղը հրեն գետնախնձոր ե առել, կեսը ցրտատար ե դուրս յեկել: Կամ...

Կինն այլես չի լսում: Ճրալով թեքվում ե մյուս կողքի վրա ու քնում: Խսկ Հակոբը կնոջ վարմունքից դժգոհ՝ շարունակում ե մտածել, թե վորպիսի հրդեհ կառաջանա քաղաքում, յեթե Կարսապետ աղի ծխնելույզն իսկապես մաքրված չլինի: Փոքր անց, սակայն, նրա մտածումները խանգարում են մկները, վոր վազվառում են առաստաղում ու տախրտակներն աղմկում այնպէս, վոր թվում ե քարեր են գլորում վերե:

Լսելով մկների աղմուկը, Հակոբը հառաջում ե և մտածում, թե արդյոք ի՞նչպես են ապրում մկներն առաստաղում:

— Տեսնես ինչո՞վ են կերակրվում դրանք այդ չոր տախտակների մեջ— ասում ե նա մտքում ու շարունակում մտածել:



ՑԱՆԿ

	bz
Փորձանք	5
Գանձ	13
Զմբան զիշեր	27

451

ԳԻՆԸ 45 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0333129

3016